

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
հաշվիչ հանձնաժողովի 12.01.2017թ նիստի
N2-Լ Արձանագրության N° 5 որոշման

ԿԱՐԳ

**ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՄԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) ընդհանուր ժողովի (այսուհետ՝ Ընդհանուր ժողով) կողմից Պալատի ներքին իրավական ակտերի ընդունման, ինչպես նաև Պալատի նախագահի, Պալատի խորհրդի անդամների և գործը նախապատրաստող անձանց ընտրությունների (այսուհետ՝ Ընտրություններ) համար անցկացվող քվեարկությունների գործընթացում քվեաթերթիկների, ինչպես նաև քվեարկության արդյունքների ամփոփման արձանագրությունների լրացման և պահպանման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Քվեաթերթիկների տպագրումն ապահովում է Պալատի հաշվիչ հանձնաժողովը:

3. Քվեաթերթիկները պատրաստվում են անթափանց թղթից:

4. Քվեաթերթիկի վրա նշվում է թեկնածուների ազգանունը, անունը և հայրանունը՝ ազգանվան այբբենական հերթականությամբ:

5. Քվեաթերթիկը պետք է ներառի ծանուցում՝ քվեաթերթիկի լրացման կարգի մասին:

6. Քվեաթերթիկի ձևը սահմանում է հաշվիչ հանձնաժողովը:

7. Միաժամանակ տարբեր քվեարկություններ անցկացվելու դեպքում քվեաթերթիկները պատրաստվում են այնպես, որ ակնհայտորեն տարբերվեն միմյանցից:

8. Քվեարկության համար անհրաժեշտ քվեաթերթիկները և քվեարկության մասնակից Պալատի անդամների ցուցակները (այսուհետ՝ ընտրողների ցուցակ) տպագրվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 5 (հինգ), և ոչ ուշ, քան 3 (երեք) օր առաջ:

9. Քվեաթերթիկները տպագրվում են ընտրողների ցուցակով նախատեսված ընտրողների թվի և այդ թվի ոչ պակաս քան 3 տոկոսի հանրագումարի թվի քանակով: Եթե հանրագումարը ամբողջական թիվ չէ, ապա այդ թիվը կլորացվում է աճողական կարգով:

10. Ընտրողների ցուցակում նշվում են անցկացվող քվեարկության տեսակը և ամսաթիվը, Պալատի գործող փաստաբանների անունը, ազգանունը, իսկ անվան և

ազգանվան համընկնման դեպքում՝ նաև հայրանունը, փաստաբանական գործունեության արտոնագրի համարը: Ընտրողների ցուցակում նախատեսվում է քվեաթերթիկ ստացած փաստաբանի ստորագրության համար համապատասխան սյունակ: Եթե ընդհանուր ժողովին քվեարկություն է անցկացվում մի քանի օրակարգային հարցերով, ապա Ընտրողների ցուցակում յուրաքանչյուր հարցով քվեաթերթիկ ստանալու կապակցությամբ նախատեսվում է փաստաբանի ստորագրության համար համապատասխան սյունակ:

11. Հաշվիչ հանձնաժողովը քվեաթերթիկների տպագրման մասին Պալատի համացանցային կայքում տեղադրում է ծանուցում՝ տպագրումից առնվազն 3 (երեք) օր առաջ:

12. Քվեաթերթիկների և ընտրողների ցուցակների տպագրմանը կարող են մասնակցել նաև թեկնածուները կամ յուրաքանչյուր թեկնածուից ոչ ավել, քան մեկ վստահված անձ, ինչպես նաև հավատարմագրված դիտորդները, բայց ոչ ավել քան մեկ դիտորդ յուրաքանչյուր դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունից:

13. Ընտրողների ցուցակը տպագրվում է քվեաթերթիկների հետ միասին՝ Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից ընտրողների թվի վերաբերյալ տրամադրած տեղեկատվության հիման վրա: Նման տեղեկատվությունը Պալատի աշխատակազմի ղեկավարը տրամադրում է Հաշվիչ հանձնաժողովի կողմից քվեաթերթիկների տպագրման նախորդ օրը: Ցուցակի տպագրման օրվանից հետո քվեարկության օրվա դրությամբ նոր փաստաբաններ ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ Պալատի աշխատակազմի ղեկավարը տալիս է համապատասխան տեղեկանք (լրացուցիչ ցուցակ՝ միայն նոր ներգրավված փաստաբանների անուններով):

14. Ցուրաքանչյուր քվեաթերթիկ և ընտրողների ցուցակի յուրաքանչյուր էջը կնքվում է հաշվիչ հանձնաժողովի կնիքով:

15. Տպագրված քվեաթերթիկները և ընտրողների ցուցակները փաթեթավորվում են համապատասխան պարկերում, որոնք կնքվում են Հաշվիչ հանձնաժողովի կնիքով, վավերացվում են Հաշվիչ հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և Հաշվիչ հանձնաժողովի կնիքի հետ միասին տեղադրվում են ընտրական փաստաթղթերի պահպանման համար նախատեսված հատուկ չհրկիզվող պահարանում (այսուհետ՝ պահարան), որը կապարակնքվում է կաշուն թաղանթի միջոցով՝ ստորագրված տպագրմանը ներկա հանձնաժողովի անդամների, թեկնածուների կամ նրանց վստահված անձանց և դիտորդների կողմից:

16. Տպագրությանը ներկա հաշվիչ հանձնաժողովի մյուս անդամները, թեկնածուները (կամ նրանց վստահված անձինք) և դիտորդները ևս իրավունք ունեն ստորագրել պարկի վրա կամ սեփական դրոշմով դրոշմելու պարկը: Պարկերի վրա կաշուն թաղանթի միջոցով փակցվում է թուղթ, որի վրա էլ ստորագրում են և կնիք են դնում վերը նշված անձինք: Պարկը պահվում է Պալատում՝ չհրկիզվող պահարանում, որը կնքվում է Հանձնաժողովի կնիքով: Քվեաթերթիկների տպագրման և պարկը

պահարանում տեղադրելու վերաբերյալ կազմվում է արձանագրությունը, որը ստորագրում են Հաշվիչ հանձնաժողովի ներկա անդամները, ինչպես նաև ներկա թեկնածուները (կամ նրանց վստահված անձինք) և դիտորդները (ըստ ցանկության):

17. Պարկը հանվում է չիրկիզվող պահարանից՝ քվեարկությունը սկսելուց առնվազն 15 րոպե առաջ, բացվում է Հաշվիչ հանձնաժողովի անդամների, թեկնածուների (կամ նրանց վստահված անձանց) և դիտորդների ներկայությամբ, ինչի մասին կազմվում է արձանագրություն:

18. Քվեաթերթիկները և ընտրողների ցուցակները տրամադրվում են Հաշվիչ հանձնաժողովի այն անդամներին, ովքեր իրականացնելու են ընտրողների գրանցումը և գրանցված ընտրողներին են տրամադրելու քվեարկության դրված հարցերին համապատասխան քվեաթերթիկներ:

II. ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Քվեաթերթիկում նշումը կատարվում է սև գույնի գրիչով: Քվեարկության ժամանակ արգելվում է Հաշվիչ հանձնաժողովի սահմանած գույնի գրիչներից բացի այլ գույնի գրիչներ օգտագործել:

Քվեաթերթիկում նշումը կարատվում է «V» նշանի միջոցով, որը պետք է դրվի ընտրողի կողմից նախընտրած թեկնածուի (թեկնածուների) անվանը հաջորդող վանդակում: Հաշվիչ հանձնաժողովի կողմից սահմանված նշանից տարբերվող նշանով քվեարկություն կատարելն արգելվում է:

Սույն կետում նշված պահանջը չպահպանելու դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր:

20. Եթե առաջադրված է Պալատի նախագահի մեկ թեկնածու, ապա քվեարկության մասնակիցը Պալատի նախագահի թեկնածուին կողմ քվեարկելիս նշում է կատարում «կողմ եմ» բառին համապատասխանող վանդակում, իսկ դեմ քվեարկելիս՝ «դեմ եմ» բառին համապատասխանող վանդակում: Սույն կետում նշված պահանջը խախտելու դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր:

21. Եթե առաջադրված են Պալատի նախագահի երկու կամ ավելի թեկնածուներ, ապա քվեարկության մասնակիցը իր նախընտրած Պալատի նախագահի թեկնածուին կողմ քվեարկելիս նշում է կատարում «կողմ եմ» բառին համապատասխանող վանդակում: Պալատի նախագահի ընտրության ժամանակ ընտրողը նշում է կատարում միայն մեկ թեկնածուի օգտին: Սույն կետում նշված պահանջը խախտելու դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր:

22. Վարկանիշային կարգով գաղտնի քվեարկության ժամանակ ընտրողը նշում կատարելով իր նախընտրած թեկնածուների օգտին, որը չպետք է գերազանցի՝ ա) Պալատի խորհրդի անդամների ընտրության ժամանակ՝ 12 (տասներկու) թեկնածուների թվաքանակը, իսկ բ) գործը նախապատրաստող անձանց թեկնածուների ընտրության ժամանակ՝ 20 (քսան) թեկնածուների թվաքանակը: Սույն կետում նշված պահանջը խախտելու դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր:

23. Եթե քվեարկության է դրված Պալատի կանոնադրության կամ վարքագծի

կանոնագրքի ընդունման կամ այլ հարց, ապա քվեարկության մասնակիցը այդ հարցի օգտին կողմ քվեարկելիս նշում է կատարում «կողմ եմ» բառին համապատասխանող վանդակում, իսկ դեմ քվեարկելիս՝ «դեմ եմ» բառին համապատասխանող վանդակում: Սույն կետում նշված պահանջը խախտելու դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր:

III. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

24. Քվեարկության արդյունքներն ամփոփում է Հաշվիչ հանձնաժողովը՝ գաղտնի քվեարկության ավարտից անմիջապես հետո՝ Հաշվիչ հանձնաժողովի նիստում:

25. Քվեարկության արդյունքներն ամփոփելիս Հաշվիչ հանձնաժողովը կազմում է համապատասխան արձանագրություններ (թիվ 1 և թիվ 2), որոնց ձևերը հաստատվում է Հաշվիչ հանձնաժողովի որոշմամբ:

26. Արձանագրությունները ստորագրում են Հաշվիչ հանձնաժողովի՝ քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա բոլոր անդամները:

27. Հաշվիչ հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփմանը զուգահեռ, նախքան քվեատուփը բացելը, կազմում է արձանագրություն (թիվ 1), որում նշվում է՝

- 1) չօգտագործված քվեաթերթիկների թիվը, անօգտագործելի դարձնելով չօգտագործված քվեաթերթիկները՝ անկյունը կտրելու միջոցով.
- 2) ժողովին մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թիվը (ցուցակային թիվ).
- 3) ըստ ցուցակի ստորագրությունների քվեաթերթիկ ստացածների թիվը:

28. Արձանագրության (թիվ 2) մեջ գրառվում է՝

- 1) քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը,
- 2) անվավեր քվեաթերթիկների թիվը,
- 3) սահմանված նմուշին չհամապատասխանող քվեաթերթիկների թիվը,
- 4) այն քվեաթերթիկների թիվը, որոնց վրա առկա նշման կապակցությամբ Հաշվիչ հանձնաժողովի անդամների միջև առաջացել է տարաձայնություն և հարցը դրվել է Հաշվիչ հանձնաժողովի քվեարկությանը,
- 5) թեկնածուների անուն, ազգանունները և յուրաքանչյուրի ստացած ձայները, իսկ այլ հարցով քվեարկության դեպքում՝ այդ հարցի օգտին տրված ձայները:

29. Թիվ 2 (երկու) արձանագրությունը կազմվում է Պալատի նախագահի, Պալատի խորհրդի անդամների, գործը նախապատրաստող անձանց ընտրության, ինչպես նաև այլ հարցով քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ: Յուրաքանչյուր դեպքում, արձանագրության մեջ «թիվ 2» գրառումից հետո նշվում է համապատասխանաբար «Ն» (Պալատի նախագահ), «Խ» (Պալատի խորհուրդ), «Կ» (գործը նախապատրաստող անձինք) և «Լ» (այլ հարցով (կանոնադրություն, վարքագծի կանոնագիրք)):

30. Արձանագրությունը կազմվում է չորս օրինակից. մեկ օրինակը փակցվում է

Պալատում՝ տեսանելի տեղում, մեկ օրինակը տեղադրվում է ընտրական փաստաթղթերի պարկում, երկու օրինակը հանձնվում է Պալատի արխիվ:

31. Քվեարկության արդյունքները հրապարակում է հաշվիչ հանձնաժողովի նախագահը կամ հաշվիչ հանձնաժողովի որոշմամբ այլ անդամը:

32. Հաշվիչ հանձնաժողովի՝ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին որոշումները հրապարակվում են Պալատի պաշտոնական կայքում և տեղադրվում են Պալատի գտնվելու վայրում՝ հայտարարությունների ցուցատախտակի վրա:

33. Պալատի ընդհանուր ժողովի արձանագրությունները պահպանվում են Պալատում:

IV. ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

34. Քվեարկության ամփոփումից հետո Պալատի խորհրդի կողմից սահմանած կարգով փաթեթավորված պարկերը հանձնվում են Պալատի աշխատակազմի ղեկավարին, ինչի վերաբերյալ Հաշվիչ հանձնաժողովի նախագահի և Պալատի աշխատակազմի ղեկավարի միջև ստորագրվում է հանձնման-ընդունման ակտ: